ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**06 հունիսի 2014 թվականի N Մ- 505 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 22-ի N 3/3.8-2/7748-14 և մայիսի 23-ի NՎԱ/3-4/6253-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված բեռը՝ (10,498.2 կգ ընդհանուր քաշով, 68,086.07 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 7682 եվրո, ցանկը կցվում է, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2.Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ